ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
18.02.2019թ. «ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ի հիմնադիր ժողովի կողմից
Գործադիր տնօրեն՝ Իրինա Տեր-Աբրամյան

«ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ

ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՊԱՏՎԵՐՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան, 2019

1. Ընկերությունը այլ հավասար պայմաններ ունեցող պատվերները կատարում է ըստ դրանց ստացման հաջորդականության, բացառությամբ, եթե պատվերի բնութագրիչները կամ շուկայում ստեղծված իրավիճակը դա անհնարին են դարձնում:
2. Ընկերությունը ձեռնարկում է բոլոր խելամիտ քայլերը, որպեսզի կատարի հաճախորդի պատվերը հաճախորդի համար հնարավոր լավագույն պայմաններով՝ հաշվի առնելով գինը, ծախսերը, ժամկետը (արագությունը), պատվերի կատարման և վերջնահաշվարկի իրականացման հավանականությունը, պատվերի ընդհանուր ծավալը, պատվերի բնույթը և պատվերի կատարման հետ կապված այլ գործոնները:
3. Սույն քաղաքականության (բ) կետում նշված գործոնների հարաբերական կարևորությունը կամ կարևորության աստիճանը որոշելու համար հաշվի են առնվում հետևյալ չափանիշները՝
   3.1. հաճախորդի պրոֆեսիոնալ կամ ոչ պրոֆեսիոնալ լինելը,
   3.2. հաճախորդի պատվերի էական պայմանները (գնային, ծավալային և քանակական պայմանները, հաճախորդի առանձնահատուկ ցուցումները և այլն),
   3.3. հաճախորդի պատվերում նշված արժեթղթերի բնութագրիչները (դասը և այլն),
   3.4. գործարքի կնքման վայրի (միջոցի) առանձնահատկությունները:
4. Պատվերները կարող են կատարվել ինչպես կարգավորվող շուկայում, այնպես էլ դրանից դուրս:
5. Այն դեպքում, երբ պատվերի առարկա արժեթղթերը թույլատրված են կարգավորվող շուկայում առևտրին, պատվերները կատարվում են բացառապես կարգավորվող շուկայում:
6. Եթե պատվերի առարկա արժեթղթերը թույլատրված են առևտրին միաժամանակ մի քանի կարգավորվող շուկայի օպերատորների համար, ապա պատվերը կատարվում է այն օպերատորի միջոցով, որի առաջարկած պայմանները (գինը, ծախսերը, ժամկետը (արագությունը), պատվերի կատարման և վերջնահաշվարկի իրականացման հավանականությունը) ավելի լավն են, բացառությամբ այն դեպքի, երբ հաճախորդը իր առանձնահատուկ ցուցումներում նշել է այլ օպերատորի անուն: